ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱՏԻԿՅԱՆ

ԱՆԳԼԻԱՅԻ ԹՈՒՐՔԱՄԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ (1945-1948 թթ.)

Թուրքական արտաքին քաղաքականությունը կտրուկ փոփոխության ենթարկվեց Թեհրանի կոնֆերանսից հետո՝ (1943 թ. նոյեմբերի 28), դեկտեմբերին երբ Անգլիան իր վրա վերցրեց Թուրքիային «դաստիարակելու» պարտականությունը: 1943 թ. հոկտեմբերի 19-30 Մոսկվայում տեղի ունեցած՝ երեք տերությունների ԱԳ նախարարների խորհրդաժողովից հետո Անգլիայի նախարար Իդենը Կահիրեում հանդիպեց Թուրքիայի ԱԳ նախարարին, ապա 1943 թ. դեկտեմբերի 4-7 Չերչիլը եւ Ռուզվելտը Կահիրեում Թուրքիայի նախագահ Ի. Ինենյուին համոզում էին փոխել երկրի քաղաքական կուրսը, պատերազմ հայտարարել Գերմանիային եւ իրավունք ստանալ մասնակցել ՄԱԿ-ի հիմնադիր ժողովին: Ստալինգրադի հաղթանակից ու երկրորդ ճակատի բացումից, հատկապես 1944 թ. հետո, երբ արդեն բացահայտ էր Գերմանիայի անխուսափելի պարտության փաստը, 1944 թ. օգոստոսի 2-ին Թուրքիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ, այնուհետեւ՝ 1945 թ. փետրվարի 23-ին, պատերազմ հայտարարեց Գերմանիային ու Ճապոնիային:

Ստալինգրադի ճակատամարտը եւ երկրորդ ճակատի բացումը փոխեցին միջազգային հարաբերությունների ընթացքը: Այժմ արդեն ի հայտ եկան նոր իրադարձություններ, որոնք շաղկապված էին հետպատերազմյան ժամանակաշրջանի հետ: Դաշնակցային հարաբերությունները ճեղքվածք էին տալիս, յուրաքանչյուր կողմ ձգտում էր իրատեսական դարձնել իր նպատակադրումները, հստակեցնել ազդեցության շրջանները: Հարաբերությունները չկարգավորվեցին նաեւ Յալթայի հանդիպման ժամանակ (1945 թ. փետրվարի 4-11): Հանդես եկան նոր հարցադրումներ ու փոխադարձ անհամապատասխանություններ, հանդիպումները վերածվեցին պարզ վիճաբանությունների, չհստակեցվեցին կոլեկտիվ շահերը:

Հարաբերությունները չկարգավորվեցին նաեւ 1945 թ. սեպտեմբերի 11-ից հոկտեմբերի 2-ը Լոնդոնում գումարված հինգ երկրների ԱԳ նախարարների խորհրդակցության ժամանակ, որն ավարտվեց կատարյալ ձախողումով,

իսկ նույն թվականի դեկտեմբերի 16-26-ին Մոսկվայում գումարված երեքի խորհրդակցությունը իբր ավարտվեց «լիակատար փոխըմբռնումով»:

Ահա այսպիսին էր միջազգային իրադրությունը, երբ ԽՍՀՄ-ը, իբր ցանկանալով լուծում տալ դեռեւս 1921 թ. իր իսկ խճճած Հայկական հարցին, բարձրացրեց հայկական տարածքների խնդիրը:

Խորհրդային կողմը նախ թուրքական կողմին հիշեցրեց, որ լրանում է 1925 թ. դեկտեմբերի 17-ին կնքված խորհրդա-թուրքական բարեկամության եւ չեզոքության պայմանագրի ժամկետը, եւ մտադիր չէ այն երկարաձգելու ու հակված է վերանայելու տարբերակին: Մինչ այդ Թուրքիան արդեն «բացահայտ» քայլ էր կատարել եւ Ղրիմի ազատագրումից հետո դադարեցրել էր Գերմանիային հումքի մատակարարումը՝ դրանով իսկ իր «հավատարմությունը» արտահայտելով դաշնակիցներին, հույս ունենալով, որ այդ շրջադարձը կգնահատվի նրանց կողմից: Բայց խորհրդային կողմը, անտեսելով այդ քայլերը, 1945 թ. մարտի 19-ին չեղյալ հայտարարեց խորհրդաթուրքական՝ 1925 թ. Փարիզում կնքված պայմանագիրը: Նույն օրը Թուրքիայի դեսպանին հրավիրելով ԱԳ նախարար Վ. Մոլոտովի հետ հանդիպման՝ նրան հայտնեցին պայմանագիրը խզելու մտադրության, եւ եթե այն պետք է երկարաձգվի, ապա փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին: Սկզբնական շրջանում թուրքական կողմը, չկռահելով Վ. Մոլոտովի ակնարկի իմաստը, համաձայնում է պայմանագիրը փոփոխության ենթարկելու տարբերակով երկարաձգելու առաջարկին: Վերադառնալով Մոսկվա՝ Ս. Սարպերը 1945 թ. հունիսի 7-ին կրկին հանդիպում է Վ. Մոլոտովին, հայտնում պայմանագիրը փոփոխություններով երկարաձգելու՝ թուրքական կառավարության համաձայնությունը: Վ. Մոլոտովը դեսպանին այդժամ տեղեկացնում է, որ փոփոխություն ասվածը վերաբերում է սեւծովյան նեղուցներին եւ խորհրդա-թուրքական սահմանի կարգավորմանը[1]: Թուրք դեսպանը մերժում է ԽՍՀՄ ԱԳ նախարարի պահանջը, ավելացնում նաեւ, որ առաջարկները Ստամբուլի կողմից երբեք չեն ընդունվի: Հունիսի 22-ին թուրքական կառավարությունը պաշտոնապես հայտարարում է, որ չի կարող ընդունել Թուրքիայի շահերը ոտնահարող պահանջները[2]:

Դեպքերի նման զարգացումը անկանխատեսելի իրավիճակ կստեղծեր, կխարխլվեին ամերիկա-անգլիական ծրագրերը, եւ ժամկետից շուտ կանգնելով կատարված փաստի առաջ՝ դաշնակիցները չէին կարող փրկել իրավիճակը: Այս տարբերակն առավել սարսափեցնող հետեւանքներ էր ունենալու

1 **А. Родинов,** Записки посла СССР в Турции 1974-1983гг., см. “Новая и новейшая история”, М., 1999, էջ 126:

2 “Российско-турецкие отношения, история, современое состояние и перспективы”, М., 2003, էջ 59:

Թուրքիայի համար, եւ թուրքական կողմը աճապարեց բախելու մառախլապատ Լոնդոնի դարպասները:

Բնական է, որ Անգլիան ընդառաջ էր գնալու թուրքական խնդրանքներին, որովհետեւ չէր կարող ձեռքից բաց թողնել ընձեռված հնարավորությունը, որով, ապագա հույսեր փայփայելուց բացի, առաջատար դիրք էր ստանալու ամերիկյան կողմի նկատմամբ: Այսինքն՝ սերտ հարաբերություններ ունենալով ԱՄՆ-ի հետ՝ Անգլիան չէր խորշում նրա թիկունքում իր համար ապահովել ցանկալի կարգավիճակ:

Խորհրդաթուրքական հարցերը պարզաբանվեցին 1945 թ. հուլիսի 16-ին կայացած՝ Մեծ Բրիտանիայի եւ ԽՍՀՄ ԱԳ նախարարներ Ա. Իդենի ու Վ. Մոլոտովի հանդիպման ժամանակ: Քննարկելով, իրար տեղեկացնելով գերմանական նավատորմի, փոխհատուցումների, տարածքների, Հարավսլավիայի, Լեհաստանի, Իսպանիայի, Սիրիայի, Լիբանանի հարցերի առնչությամբ իրենց կառավարությունների դիրքորոշումները՝ Ա. Իդենը տեղեկացնում է, որ ինքը հանդիպել է Թուրքիայի ներկայացուցչի հետ եւ ցանկանում է մեկ անգամ եւս ճշտել խնդրի էությունը:

Կռահելով, որ թուրքերը անպայման գլխիվայր շրջված են ներկայացրել հարցը, Մոլոտովը ավելորդ չի համարում անդրադառնալ անցյալին. «1921 թ. թուրքերն օգտվեցին խորհրդային պետության թուլությունից եւ նրանից խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Խորհրդային Միության հայերը իրենց վիրավորված են զգում: Այդ պատճառներից ելնելով էլ խորհրդային կառավարությունը օրինական կերպով բարձրացրեց Խորհրդային Միությանը պատկանած տերիտորիաները վերադարձնելու հարցը:

Թուրքիային Խորհրդային Միության տերիտորիալ պահանջների հարցը ծագեց այն պատճառով, որ թուրքերը խորհրդային կառավարությանը առաջարկեցին իրենց հետ կնքել դաշնակցելու պայմանագիր եւ հարցում արին, թե խորհրդային կառավարությունը ի՞նչ պայմաններով է պատրաստ կնքել պայմանագիրը: Բնականաբար, խորհրդային կառավարությունը թուրքական կառավարության այդ հարցին պատասխանեց իր պայմանների շարադրմամբ»[3]:

Չսպասելով Մոլոտովի կարծիքին՝ Իդենը բացատրությունը գնահատելով վտանգահարույց, զգալով խորհրդային կողմի վճռականությունը, նաեւ չբացահայտելով իր կառավարության վերաբերմունքը, ավելացնում է, որ «թուրքերը համաձայն չեն բավարարել Խորհրդային Միության տերիտորիալ պահանջները»[4]:

---

3 «Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարների՝ Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը», փաստաթղթերի ժողովածու, Երեւան, Հայաստան, 1989, էջ 44 (այսուհետ՝ Դաշնակից երեք տերությունների...):

4 Անդ, էջ 45:

Իդենի լրացումը սոսկ տեղեկատվություն չէր, այլ թուրքական կարծիքի կրկնություն: Իդենի մտքերը բազմանշանակ չէին նաեւ, նա պարզապես հայտնում էր, որ իր երկիրը չեզոք դիրք է գրավելու խնդրի առթիվ: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Անգլիան, դուրս գալով խոստացած չեզոքությունից, խոչընդոտներ էր հարուցում հարցի լուծման գործում: Ավելին, քաջատեղյակ լինելով խնդրին՝ Իդենը արդեն հասկացնում էր, որ հայկական պահանջները մխրճվելու են նմանատիպ այլ խնդիրների մեջ եւ չեն ստանալու իրենց լուծումը: Մոլոտովը, սակայն, զգալով վերաբերմունքի պարզ փոփոխության իմաստը, դիմում է լրացուցիչ հավելման, փորձում համոզել, որ խնդիրը ունի բարոյական կողմ նաեւ, որ թուրքերը հնարավորություն ունեն հարցը լուծել քաղաքակիրթ ճանապարհով. «Այն տերիտորիան, որի մասին խոսք է գնում, թուրքերին չի պատկանում: Նրանք անարդարացի վարվեցին՝ այն խլելով Խորհրդային Միությունից», ավելին՝ «Լեհերը նույնպես անարդարացի վարվեցին, երբ 1921 թ. զավթեցին խորհրդային տերիտորիայի մի մասը: Սակայն լեհերը որոշել են վերանայել իրենց դիրքը եւ այժմ համաձայնվեցին այդ տերիտորիաները վերադարձնել Խորհրդային Միությանը»[5]:

Եթե լեհերը անօրինական զավթումը ետ են վերադարձնում, ինչո՞ւ նույնը չպահանջել Թուրքիայից: Մոլոտովը եւ խորհրդային կառավարությունն արդեն կռահում էին, որ գոյություն չունի դաշնակից հասկացությունը, որ այժմ պայքար է գնում հետպատերազմյան տարիների ուժերի հավասարակշռության փոփոխման համար եւ, դժբախտաբար, այստեղ նորից բարձրանում էր Թուրքիայի գինը: Անգլո-ամերիկյան կողմը զգում էր, որ խորհրդային կողմի յուրաքանչյուր ճնշում արագացնելու է Թուրքիայի՝ դեպի արեւմուտք շրջվելու գործընթացը, եւ քննարկման բերված Հայկական հարցին նայում էին հենց այդ տեսանկյունից: Այստեղ արդեն թերեւս ավելորդ էր Մոլոտովի հիշեցումը, թե «անգլիական կառավարությունն անցյալում բազմիցս հանդես է եկել թուրքական տիրապետության տակ եղած հայ բնակչության պաշտպանությամբ»[6], եւ հիմա պահն է իրականացնել մտադրությունը: Մոլոտովը, սակայն, չէր կարող տեղյակ չլինել, որ նույն անգլիական դիվանագիտության հակահայկական քաղաքականության արդյունքում էր, որ շուրջ հարյուր տարվա (ԺԹ. դար) ընթացքում ռուս-թուրքական պատերազմներից հետո հաղթող կողմ Ռուսաստանը զրկվում էր Արեւմտյան Հայաստանը բռնակցելու հնարավորությունից: Ավելին, Առաջին աշխարհամարտի արյունլվա պատմությանը քաջատեղյակ Անգլիան, որ հանդես էր գալիս իբրեւ հայ ժողովրդի դաշնակից, գրեթե ոչ մի քայլ չձեռնարկեց Հայկական հարցի արդար լուծման ուղղությամբ:

5 «Դաշնակից երեք տերությունների», էջ 45:
6 Անդ:

Այնուամենայնիվ, Իդենը, ամենայն հավանականությամբ, զրույցը շարունակելու պարտադրանքով հարցնում է, «թե շա՞տ հայեր են ապրում թուրքական տերիտորիայում»[7]:

Ճիշտ է, Մոլոտովը հայերի թվի մասին սպառիչ պատասխան է տալիս, հիշեցնում, որ Թուրքիայում (Արեւմտյան Հայաստանում - Հ.Ջ.) դեռեւս 400-500 հազար հայեր կան, որ «Խորհրդային Հայաստանի տերիտորիայից դուրս, արտասահմանում ապրում է մեկ միլիոնից ավելի հայություն: Երբ հայերի տերիտորիան ընդարձակվի, արտասահմանում ապրող հայերից շատերը կձգտեն վերադառնալ հայրենիք: Հայերը շատ ընդունակ եւ եռանդուն մարդիկ են, հատկապես տնտեսական հարցերում: Թող թուրքերը հայերին տան Խորհրդային Միությանը, դա կլինի արդարացի»[8]:

Մինչեւ խորհրդաժողովի բացումը տեղի ունեցած այս հանդիպումը չի կարելի դասել վճռական իրադարձությունների շարքին, որովհետեւ Թեհրանի եւ Յալթայի հանդիպումներից հետո տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխություններն արդեն կանխորոշել էին Պոտսդամի բանակցությունների վերջնական արդյունքը: Հանդիպումը պարզ դիվանագիտական քայլ էր, որով հիշեցնում էր կատարվում այն մասին, որ Անգլիան սատար չի կանգնելու ԽՍՀՄ տարածքային պահանջներին, որ արդեն նշմարվող «սառը պատերազմի» քամիները նախկին դաշնակիցներին տանելու էին տարբեր բեւեռներ:

Թուրքիայի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ պատմականորեն ինչպես Մեծ Բրիտանիան, այնպես էլ ԽՍՀՄ-ը նախանձով է վերաբերվել այլ երկրների հետ Թուրքիայի բարեկամությանը: Թուրքիան արդյունավետ մրցասպարեզ է ԽՍՀՄ-ի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ դիվանագիտական, տնտեսական ու ռազմական հակասությունների համար: Բրիտանական քաղաքականության հիմքը, հավանաբար, պետք են լինի Թուրքիային աջակցելն ու հզորացնելը, որպեսզի վերջինս կարողանար ավելի հաջող դիմակայել Թուրքիան խորհրդային ուղեծրի մեջ ներգրավելու փորձերին:

Ավելորդ չէ ավելացնել, որ հետպատերազմական վերլուծականների հիմքում դրված էր այն միտքը, որ խնդիրը ծնվել է ԺԹ. դարի ռուս-թուրքական պատերազմների շրջանից: Այնուհետեւ հիմնավորվեց այն տեսակետը, որ տարածքային պահանջները ուրիշ ոչինչ չեն, քան Միջերկրական ծով դուրս գալու՝ ցարական ձգտումների իրականացում: Այս առումով էլ առաջնային էր դառնում Թուրքիայի պաշտպանությունը: Այսինքն՝ կրկնվելու էր այն իրավիճակը, ինչն ստեղծվել էր Առաջին աշխարհամարտի ավարտական փուլից մինչեւ Լոզանի խորհրդաժողով ընկած շրջանում, երբ պարտված Թուրքիային վերապահվեց հաղթողի կարգավիճակ:

7 Անդ:
8 Անդ:

1945 թ. հոկտեմբերի 5-ին հայկական տարածքների խնդրին անդրադարձավ բրիտանական ԱԳՆ հետազոտական «Ֆորին Օֆիս» բաժանմունքը: «Հայկական պահանջ թուրքական տարածքի վերաբերյալ» նրա հեղինակած տեղեկանքի անվանումն անգամ հուշում էր, որ գործ ենք ունենալու կողմնակալ դիտարկումների հետ: Նախ, հեղինակը իր հետագա տեսակետները հիմնավորելու նպատակով հայտնում էր, որ հայերը մինչեւ 1945 թ. գոհ են եղել իրենց ճակատագրից, որ երբեք տարածքային խնդիրներ չեն ունեցել, որ առկա պահանջը ծնվել է տարերայնորեն, եւ այդ ամբողջը «խորհրդային սադրանքի» հետեւանքն է:

Ապա տեղեկագիրը ծանոթացնում է պահանջի նկատմամբ ձեւավորված կարծիքներին, համաձայն որոնց, հայերը ցանկանում են արտասահմանում գտնվող հայրենակիցներին հայրենիք վերադառնալու հնարավորություն ստեղծել, եւ որպես լրացում հայտնում՝ «դա արդար քայլ կլիներ մի ազգի նկատմամբ, որի հետ անցյալում ծայրահեղ անարդար էին վարվել», ապա մի կարծիք, որը ի չիք է դարձնում առաջին երկու փոքր ի շատե մարդասիրական եզրակացությունները եւ կրկնում է «Նյու Յորք Թայմսում» տպագրված մի նամակի հեղինակի խոսքերը. «Կարսի ամրությունը Խորհրդային Միությունը ռազմավարական տեսանկյունից շատ անհրաժեշտ է»[9]:

Այստեղից էլ, թեկուզ մասնակիորեն լուծել Հայկական հարցը, նշանակում է Ռուսաստանի համար ճանապարհ հարթել դեպի նեղուցներ ու Միջերկրական ծով: Ասել է, թե նորից ասպարեզ էր բերվում դարեր շարունակ կրկնված այն «մտահոգությունը», համաձայն որի, եթե հայերը դուրս գտնվեին ռուսական ազդեցության շրջանակներից, հնարավոր էր, որ ստանային իրենց խնդրի ցանկալի լուծումը: Սակայն պատմությունը չի մոռանում թեկուզ 1917-1920 թթ. իրադարձությունները, երբ նման կարգավիճակում գտնվող հայությունը անհրաժեշտ պաշտպանության չարժանացավ անգամ դաշնակից հորջորջվող որեւէ երկրի կողմից, ոչ ոք չփակեց թուրքական յաթաղանի սրատող ընթացքի ճանապարհը:

Բացի այդ՝ միտում կա հիմնավորել թուրքական բռնատիրության օրինական իրավունքները հայության հայրենիքի նկատմամբ. «Կարճ ասած, չնայած հայերի պատմական իրավունքը իր հայրենիքի վերաբերյալ թվագրված է մ.թ.ա. Է. դար, միեւնույն է թուրքերի չորս հարյուր տարի շարունակ դրա տարածքի մեծ մասը շրջափակման մեջ էին պահում...»[10]:

Բացահայտորեն շարունակելով թուրքասիրական նկրտումները՝ Ֆ. Օֆիսի տեղեկանքը անդրադառնում է նաեւ 1919, 1920 թթ. դիվանագիտական փաստաթղթերին, որոնցով փորձ էր արվում լուծում տալ բազմաչարչար

9 “Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг.”, Ереван, 2010, էջ 268:

10 Անդ:

խնդրին, որը «թուրքերին դրդեց դիմադրության», եւ քաղաքական նպաստավոր պայմաններն օգտագործելով՝ Լոզանի խորհրդաժողովում նրանք «հիմնավորեցին» իրենց իրավունքները: Խորհրդաժողով, որտեղ խորհրդային կայսրության ու մասնակից տերությունների ջանքերով «այլեւս Հայաստան չէր հիշատակվում»[11]:

Թեեւ ամբողջ տեղեկանքը ունի թուրքապաշտպան նպատակ, այնուամենայնիվ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում ոչ վաղ անցյալի ազգաբանական կառուցվածքի, հայկական տարածքների նկատմամբ իրավաբանական հիմնավորումների եւ թուրքական դիրքորոշման մասին:

1946 թ. ապրիլի 4-ին մշակվեց նույն գրասենյակի բացատրությունը՝ «Թուրքական տարածքների վերաբերյալ հայկական եւ վրացական պահանջները» վերնագրով:

Հեղինակը, կրկնելով նախորդ բացատրությունները, նշում է, որ վրացական դիրքորոշումները հակասում են «հայկական պահանջին», ավելին, հայերը իբր այժմ պահանջում են նաեւ Սեւրի պայմանագրի իրականացում, «նախագահ Վիլսոնի Հայաստանը»: Եթե անգամ այդ մեծ պահանջը առաջ է քաշվում թեկուզ Կարսից, Արդահանից եւ Արդվինից շատ ավելի փոքր տարածք ձեռք բերելու նպատակով, միեւնույն է, թուրքերը շատ քիչ երաշխիք ունեն, որ քչին հասնելով՝ Ռուսաստանը հետագայում առավել մեծ պահանջներ չի ներկայացնի: Նախագահ Վիլսոնի առաջարկած ծրագրի իրականացումը կնշանակի, որ թուրքերը կկորցնեն իրենց երկրի մեկ հինգերորդ մասը: Նրանք անկասկած կպայքարեն դա թույլ չտալու համար:

Այժմ սխալ եւ անխոհեմ է համարվում թույլ տալ, որ հայերի պատմական պահանջները եւ անգամ վրացիների առավել կասկածելի պահանջները, օգտագործվեն Սովետական Միության շահերի համար: Ամեն դեպքում, եթե Սովետական Միությունը պահանջի, որ վրացիներին հատկացվի իրենց պահանջած տարածքը, նա հազիվ թե կարողանա պնդել, որ այդ նույն տարածքը պետք է անցնի նաեւ Հայաստանին»[12]:

Նորից անդրադառնալով Կարսի, Արդահանի ճակատագրին՝ հեղինակը նոր վկայություն է ներկայացնում, որ այդ հարցում վճռորոշ է եղել Ստալինի կարծիքը: Ազգությունների ժողովրդական կոմիսարը հայտարարում է, որ Կարսն ու Արդահանը չպետք է կռվախնձոր դառնան Թուրքիայի հետ հարաբերություններում, որ «բնակիչների 67%-ը մուսուլման են, եւ որ Հայաստանի համար Թուրքիայի դեմ պատերազմը կշարունակվի, որ ռուսական կոմունիզմը – դա ուրիշ ոչինչ չէ, քան թաքնված ռուսական իմպերիալիզմ»[13]:

11 Անդ, էջ 270:
12 Անդ, էջ 281-292, 293:
13 Անդ, էջ 286:

Ժողովուրդների ազատությամբ մտահոգված բոլշեւիզմը, թեկուզ զգալի տարածքային կորուստների գնով, պետք է իրականացներ իր դարակազմիկ ծրագիրը՝ կոմունիստական հասարակարգի կառուցումը, «հավասարության, եղբայրության» սկզբունքների իրականացումը: Այդ վեհ գաղափարները ազգային, սահմանային խնդիրների մասին մտածելու ժամանակ չէին հատկացնում Ի. դարի ասպետներին: Ահա թե ինչու, ինչպես նշում է փաստաթղթի հեղինակը, 1921-1945 թթ. սահմանների մասին որեւէ պահանջ, հիշատակություն չի արվել: Հակառակը, ԽՍՀՄ 1925 թ. Թուրքիայի հետ կնքել է բարեկամության պայմանագիր, այն երկարաձգել 1929-1935 թվականներին եւ միայն 1945 թ. որոշել փոփոխության ենթարկել[14]:

Այստեղից էլ, ըստ հեղինակի, տարօրինակ է թվում, որ ԽՍՀՄ-ը բարձրացնում է այդ խնդիրը: Հաղթող տերությունները ձգտելու էին ազդեցության նոր շրջանների հաստատմանը: Հայկական հարցը, որ բարձրացրել էին սփյուռքահայ կազմակերպությունները, սկուտեղի վրա մատուցվում է ԽՍՀՄ-ին: Ստալինը չէր կարող անարձագանք թողնել նման հնարավորությունը, որովհետեւ նրան թվում էր, թե համեղ պատառ է բաշխվում ԽՍՀՄ-ին, եւ անհրաժեշտ է օգտագործել պատեհ առիթը եւ ընդարձակել նաեւ Վրաստանը:

Կարսի ու Արդահանի խնդիրը բարձր մակարդակով քննարկվեց նաեւ Լոնդոնում 1945 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամ երկրների ԱԳՆ խորհրդակցության ժամանակ: Վ. Մոլոտովը նորից կրկնեց ԽՍՀՄ պահանջը, բայց այն թեեւ մնաց անարձագանք, սակայն ԱՄՆ պետքարտուղար Ջ. Բյորնսը իր հուշերում գրում է. «Մոսկվայի կառավարությունն ավելի շատ պզտիկ զիջումներ պիտի ընէ Պալքաններու մեջ, բայց երբեք տեղի պիտի չտա նեղուցներու եւ Կարս-Արդահանի խնդրի մեջ»[15]:

Պոտսդամում հայկական տարածքների խնդիրը բարձրացվել էր, ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, հանպատրաստից, առանց դաշնակիցների հետ նախօրոք կազմակերպած քննարկումների, հապճեպ, որովհետեւ ԽՍՀՄ-ը մտածում էր, որ խնդիրը դրական լուծում կստանա ԱՄՆ կողմից, եւ անհամեմատ կբարձրանա նրա հեղինակությունը առաջադեմ մարդկության շրջանակներում: Ուստի օգտագործելով խորհրդաթուրքական՝ 1935 թ. պայմանագրի ժամկետը լրանալու, այն երկարաձգելու պատեհ առիթը՝ խորհրդային կողմը նպատակահարմար գտավ, որպես պայմանագրի երկարաձգման երաշխիք, պահանջել Կարսի, Արդահանի, Արդվինի վերադարձը, կամ, ինչպես ընդունված է ասել, վերականգնել մինչեւ 1921 թ. խորհրդաթուրքական սահմանը:

14 Տե՛ս անդ:
15 «Ջարթօնք», 5 դեկտեմբերի, 1967:

Խորհրդային կողմը լիահույս էր, որ Թուրքիան կընդունի պահանջը, քանզի պատերազմի տարիներին Թուրքիայի պահվածքը ենթակա էր համապատասխան վերաբերմունքի, եւ Թուրքիան պատժից խուսափելու համար լռելյայն կհամաձայնվեր: Բայց կատարվեց բոլորովին հակառակը: Թուրքիան մերժեց ոչ միայն նեղուցներում բազա տրամադրելու, այլեւ տարածքային զիջումների պահանջը:

Անտրամաբանական էր նաեւ խորհրդային կողմի հաջորդ նորամուծությունը, երբ որոշ ժամանակ անց պահանջատեր կողմ ներկայացվեց նաեւ Վրաստանը:

Փաստորեն, խորհրդային կողմը, քանի դեռ չէր լուծել հայկական արդարացի պահանջների հարցը, առանց պատմական հիմքի՝ մեջտեղ բերեց երրորդ կողմին, որն էլ հեղինակազրկեց հայկական պահանջը՝ ստեղծելով խնդրի՝ առկախ թողնելու հնարավորություն:

ԽՍՀՄ-ը, թեեւ անուշադրության չէր թողնում 1942 թ. հետո սկսված առաջատարության համար պայքարը եւ ԱՄՆ-ի ու Անգլիայի հետ վիճարկում էր պատերազմում գլխավոր դերակատարի խնդիրը, այնուամենայնիվ, երկրորդ ճակատի բացումից հետո հայտնվեց սահմանափակ շրջանակում, որովհետեւ դաշնակիցները անգիջում պայքար էին ծավալել, որպեսզի ԽՍՀՄ-ին զրկեին Կենտրոնական Եւրոպայում կոմունիստական վարչակարգեր հաստատելու հնարավորությունից:

Մեծ Բրիտանիայի հակառուսական ավանդական քաղաքականությունը, նշված ժամանակահատվածում ներառելով նաեւ Հայկական հարցը, համակարծիք լինելով ԱՄՆ-ի հետ եւ արժանանալով նրա պաշտպանությանը, իրականացրեց դեպի Միջերկրական ծով եւ նեղուցներ ձգտող ԽՍՀՄ-ի ծրագրերի ձախողումը՝ մեծագույն նպաստ բերելով ԱՄՆ-ի՝ գերտերություն դառնալու ձգտումներին ու թուրքական պետության պահպանման գործընթացին:

РЕЗЮМЕ

В 19-ом веке консервативная антиармянская политика Великобритании пришла к своему апогею, основной причиной которой является ответный удар по владению проливами и выходу к Средиземному морю Российского Империи. Имея свои интересы на Ближнем и Среднем Востоке, Англия в дальнейшем также сохранила свою позицию, в результате чего нанесла огромный удар по Армянскому вопросу и исходя из политики сохранения равновесия в регионе спонсировала и защищала турецкое государство. В годы Второй мировой войны, до открытия второго фронта, Великобритания открыто и тайно осуществляла антисоветскую политику. После Сталинградской битвы, остерегаясь опасности русификации Западной Европы, Англия поменяла свою

политику и начала поддерживать те страны, которые оказались перед советской опасностью. Турция была щедро вознаграждена со стороны Великобритании и своего союзника США, была нейтрализована опасность антисоветского вторжения и, в рамках политических интересов с СССР, сохранить с ним сотрудничество только на антинемецкой арене.

Английские аналитические центры, пресса, обращаясь к армянским территориальным требованиям, хотя констатировали также верность исторических фактов, однако главной проблемой оставалась антисоветская борьба, ответ по экспансионистской политике СССР.

Статья, анализирующая документы и различные точки зрения на данный на вопрос в свете Лозаннской конференции, преследует только одну цель – более выражено представить связь Лозан-Тегеран-Ялта-Потсдам, подробнее отразить антиармянскую политику Великоритании, ее мотивы, в результате которых на протяжении 200 лет Армянский вопрос оставался нерешенным .

SUMMARY

In the 19th century, the conservative anti-Armenian policy of Great Britain came to its climax, the main cause of which was the riposte to own straits and exit to the Mediterranean Sea of the Russian Empire. With its interests in the Middle East, England subsequently also maintained its position, resulting in a huge blow inflicted on the Armenian question and resulting of the policy of maintaining balance in the region it sponsored and defended the Turkish state. During the Second World War, before the opening of the second front, the Britain openly and secretly carried out an anti-Soviet policy. After the Battle of Stalingrad, avoiding the danger of Russification of Western Europe, England changed its policy and began to support those countries which were facing the Soviet threat. Turkey has been richly rewarded by the UK and its US ally, has been neutralized of the danger of anti-Soviet invasion and, in the framework of political interests with the Soviet Union, kept the cooperation only on the anti-German arena.

British analytical centers, mass media referring to Armenian territorial demands, although stated as faithful the historical facts, but the main problem remained the anti-Soviet struggle, the response for the expansionist policy of the Soviet Union.

The article analyzing the document and the different points of view on this question in the light of the Lausanne Conference, pursues only one goal - to present a more pronounced relationship Losan-Teheran-Yalta-Potsdam, to reflect more the anti-Armenian policy of the Great Britain, its motives, which resulted to the fact that within over 200 years the Armenian question remained unresolved.